Քաղաքաշինության ոլորտը՝ կառավարության ծրագրում

Հոկտեմբերի 20-ին Հայաստանի Հանրապետության վարչապետ Կարեն Կարապետյանը Ազգային Ժողովում ներկայացրեց ՀՀ կառավարության նոր ծրագիրը, որտեղ քաղաքաշինության ոլորտն արտացոլված էր հետևյալ կետերով.

*** Քաղաքաշինություն**

• երկրաշարժի հետևանքով աղետի գոտում անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի շարունակական իրականացում, 2017 թվականին Գյումրի քաղաքում ծրագրի ավարտ.

• քաղաքաշինական խոշոր համալիրների ներդրումային ծրագրերի մշակում և ներկայացում միջազգային ներդրումային ցուցահանդեսներում.

• եռամսյա ժամկետում քաղաքաշինության ոլորտում թույլտվությունների ստացման էլեկտրոնային համակարգի ամբողջական գործարկում.

• **6 ամսվա ընթացքում՝**

ա. քաղաքաշինության ոլորտում պետական և համայնքային բյուջեների հաշվին իրականացվող շինարարական աշխատանքների գնագոյացման սկզբունքները ձևավորող բաղադրիչների արդիականացում,

բ. Հայաստանի Հանրապետության մարզերում առկա պետական և համայնքային սեփականություն հանդիսացող՝ բնակելի և հասարակական նշանակության կիսակառույցների հետագա օգտագործմանն ուղղված առաջարկությունների մշակում.

* 2017-2021 թվականների ընթացքում հանրապետության բնակավայրերի գլխավոր հատակագծերով ապահովելու խնդրի ամբողջական լուծում: